

**Հայտին առնչվող հարցումների վերաբերյալ Պարզաբանում No.3**

**Էլեկտրահաղորդման ցանցի բարելավման ծրագիր**

**Երևանի ՋԷԿ-ի 220/110/35 կՎ ենթակայանի վերականգնման համար կայանի նախագծման, մատակարարման և տեղակայման ձեռքբերում  
(ICB No. ETNIP\_YTPC\_ICB\_1/2015)**

**5-ը նույնների, 2015թ.**

No.	Հարցումներ հայտատուների կողմից	Պարզաբանում Գործատուի կողմից
1.	<p><b>1. Ավտոտրանսֆորմատոր 200 ՄՎԱ. Խնդրում ենք սահմանել՝</b></p> <p>a) Լարման փոխակերպման ռեժիմ. հաստատուն հոսքով տեսա՞կ, թե՞ փոփոխական մագնիսական հոսքով տեսակ:</p> <p>b) Դիմադրության մեծությունը բոլոր տերմինալներում: Խնդրում ենք սահմանել թույլատրելի շեղումները:</p> <p>c) Արդյո՞ք անհրաժեշտ է երրորդային փաթույթ, թե՞ ոչ: Եթե այդպես է, ապա խնդրում ենք տրամադրել տեխնիկական բնութագրերը:</p> <p>d) Արդյո՞ք ելուստների ընդհանուր քանակը 11 է՝ համաձայն տեխնիկական տվյալների:</p> <p>e) Սահմանված միացումների տեսակը YNyn0 է: Խնդրում ենք պարզաբանել, քանի որ պահանջվում է ավտոտրանսֆորմատոր:</p>	<p>a) Պետք է համապատասխանի ներկայիս միջազգային ստանդարտներին:</p> <p>b) Պետք է համապատասխանի ներկայիս միջազգային ստանդարտներին:</p> <p>c) Տե՛ս մրցութային փաստաթղթերի 7-րդ կետը, էջ 293</p> <p>d) Պետք է սահմանվի արտադրողի կառուցվածքային պահանջներով:</p> <p>e) Տե՛ս մրցութային փաստաթղթերի 6-րդ կետը, էջ 293</p>
2.	<p><b>2. Հոսանքի տրանսֆորմատորներ 220 կՎ և 110 կՎ. Խնդրում ենք պարզաբանել՝</b></p> <p>a) Տրանսֆորմացիայի գործակիցը</p> <p>b) Երկրորդային հոսանքը</p> <p>c) Երկրորդային փաթույթների համար հզորությունները և դասերը</p>	<p>a), b) և c) կետերը պետք է համապատասխանեն միջազգային նորմերին և ստանդարտներին:</p>
3.	<p><b>3. Տրանսֆորմատորներ 27,5 ՄՎԱ 110/35/6 կՎ.</b></p> <p>Մենք հասկանում ենք, որ յուրաքանչյուր փաթույթի համար առավելագույն հզորությունները հետևյալն են՝</p> <p>27,5 ՄՎԱ 110 կՎ-ի համար</p> <p>20 ՄՎԱ 35 կՎ-ի համար</p> <p>11 ՄՎԱ 6 կՎ-ի համար</p> <p>a) Բեռի կորստի վերաբերյալ սահմանված է. «Բարձր լարման և միջին լարման միջև 27,5 ՄՎԱ նոմինալ հզորություն»: Այս պայմանը չի համապատասխանում նախկինում սահմանված բեռի կորուստներին: 110/35 կՎ կոմբինացիայում առավելագույն</p>	<p>Տե՛ս հայտին առնչվող հարցումների վերաբերյալ Պարզաբանում No. 2-ը («Նախամրցութային հանդիպման համար պարզաբանումների պահանջ»), 6-րդ կետ՝</p> <p>a) Պարզաբանում – Մեր տեխնիկական բնութագիրը ճշգրիտ է:</p> <p>b) Մենք ծանոթ չենք ձեր հաշվարկներին: Խնդրում ենք հետևել արտադրողի ստանդարտներին:</p>

No.	Հարցումներ հայտատուների կողմից	Պարզաբանում Գործատուի կողմից
	<p>թույլատրելի հզորությունը 20 ՄՎԱ է: Խնդրում ենք պարզաբանել, թե արդյո՞ք ձեր տեխնիկական բնութագիրը ճշգրիտ է:</p> <p>Ե) Նույնը պահանջվում է կարճ միացման դիմադրության համար: Նշված չէ, թե ինչ լարման տրանսֆորմացիայի գործակից պետք է երաշխավորի 10 %-ը (110/35 կՎ, 110/6 կՎ, թե՞ 35/6 կՎ):</p> <p>10% արժեքը հնարավոր չէ ապահովել 27,5 ՄՎԱ-ով սկզբում նկարագրված իրավիճակի համար:</p>	
4.	<p>Համաձայն մրցութային տեխնիկական բնութագրերի՝ Կապալառուն պետք է իր ծավալներում ընդգրկի 220 կՎ լարման ենթակայանի համար ապամոնտաժման աշխատանքները: Մրցութային տեխնիկական բնութագրերի գնային աղյուսակներում մենք չենք գտել համապատասխան տողը: Խնդրում ենք խորհուրդ տալ, թե որ տողում մենք պետք է ներառենք այդ աշխատանքների համար ծախսերը:</p>	<p>Այս ծավալը ներառված է Խորհրդատուի կողմից շինարարական աշխատանքների ընդլայնված տողում:</p>
5.	<p>Համաձայն մրցութի տեխնիկական բնութագրերի՝ Կապալառուն իր ծավալում պետք է ներառի 110 կՎ և 220 կՎ լարման ենթակայանի նոր սարքավորումների նոր հիմքերի առաքումը և տեղակայումը: Մրցութային տեխնիկական բնութագրերի գնային աղյուսակներում մենք չենք հայտնաբերել համապատասխան տողը: Խնդրում ենք խորհուրդ տալ, թե գնային աղյուսակի որ տողում մենք պետք է ներառենք այդ առաքումների և տեղակայման ծախսերը:</p>	<p>Այս ծավալը ներառված է Խորհրդատուի կողմից շինարարական աշխատանքների ընդլայնված տողում:</p>
6.	<p><b>"Armenia YTPC Substation_final_corrected_upd.pdf", էջ 81/691, գնային աղյուսակի կետ 1.3.6</b></p> <p>Խնդրում ենք խորհուրդ տալ, թե մանրամասն ինչ տիպի աշխատանքներ են ներառված գնային աղյուսակի հարդարման աշխատանքներին առնչվող տողում:</p>	<p>Հարցը ճշգրիտ չէ: Տե՛ս շինարարական աշխատանքների նորմերը և ստանդարտները:</p>
7.	<p><b>Գնային աղյուսակի կետեր 1.1.3.2, 1.1.3.3, Տեխնիկական աղյուսակներ, էջ 215-233, 110 կՎ գատիչ</b></p> <p>A. Առկա են հակասություններ գնային աղյուսակի (նշված են եռաբևեռ գատիչներ) և տեխնիկական աղյուսակների (նշված են միաբևեռ, եռաբևեռ և միակցված գատիչներ) միջև:</p> <p>Խնդրում ենք տեղեկացնել մեզ տեխնիկական աղյուսակներում նշված յուրաքանչյուր տեսակի քանակը, տե՛ս նաև ստորև նշված B պարզաբանումը:</p> <p>B. Պահանջվում է աշխատող սարքավորում 110 կՎ</p>	<p>A. Տե՛ս հայտին առնչվող հարցումների Պարզաբանում No. 2-ը, կետ 30:</p> <p>B. Խնդրում ենք հետևել ընթացիկ միջազգային ստանդարտներին:</p>

No.	Հարցումներ հայտատուների կողմից	Պարզաբանում Գործատուի կողմից
	<p>միաբնեռ զատիչի համար:</p> <p>Արդյո՞ք մենք կարող ենք առաջարկել միաբնեռ սարքավորումների փոխարեն եռաբնեռ սարքավորումներ, այսինքն՝ մեկ շարժաբեր բոլոր երեք բնեռների համար:</p> <p>«Վանաձոր-1» և «Ալավերդի-2» ենթակայաններում եռաբնեռ սարքեր են տեղակայված:</p> <p>Սարքավորումները և մալուխների անցկացումը կլինեն ավելի էժան:</p>	
8.	<p><b>Գնային աղյուսակի կետեր 1.1.1.3, 1.1.1.4; տեխնիկական աղյուսակներ, էջ 264-280, 220 կՎ զատիչ</b></p> <p>Առկա են հակասություններ գնային աղյուսակի (նշված են եռաբնեռ զատիչներ) և տեխնիկական աղյուսակների (նշված են միաբնեռ, եռաբնեռ և միակցված զատիչներ) միջև:</p> <p>Խնդրում ենք տեղեկացնել մեզ տեխնիկական աղյուսակում նշված յուրաքանչյուր տեսակի քանակը:</p>	<p>Մենք չենք գտնում որևէ հակասություն: Տե՛ս ընթացիկ միջազգային ստանդարտները:</p>